ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/05, 17.04.2019թ.

Բողոք բերող անձ՝ «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ

Պատվիրատու «Մարտունու ԲԿ» ՓԲԸ

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/3» ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկա Դեղորայքի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել թիվ «ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-2019/3» ծածկագրով գնանշման հարցման պատվիրատուին փոփոխություններ կատարել «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի հետ կնքվող պայմանագրի 1-ին հավելվածում՝ դրանում նախատեսելով նաև 3-րդ և 35-րդ չափաբաժինները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՆԻՍՏԵՐԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

• 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

AlfaPharm
Import
«Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ
ՀԱՍՑԵ՝ ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ՄԵԼԻՔ ԱԴԱՄՅԱՆ 1

ԲՈՂՈՔ ԲԵՐՈՂ՝ «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ
ՏՆՕՐԵՆ՝ ՍԱՄՎԵԼ ՇԻԼԱՋՅԱՆ
ՀՎՀՀ՝ 02606482
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ 273.120.79534
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ՝ 03 Ա 229534
ՀԱՍՑԵ՝ ՀՀ, Ք. ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՄԵՆԻ 1/1
ՀԵՌ՝ 060 700 500
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ import@alfapharm.am

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԿ» ՓԲԸ
ՀԱՍՑԵ՝ ՀՀ, Ք. ՄԱՐՏՈՒՆԻ, ԳԵՏԱՓՆՅԱ 2/17

ԲՈՂՈՔ

(թիվ ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2019/3 ծածկագրով գնանշման հարցման պատվիրատուին «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի հետ կնքվող պայմանագրում փոփոխություններ կատարելուն պարտավորեցնելու մասին)

18.03.2019թ-ին «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) հայտ է ներկայացրել մասնակցելու «Մարտունու ԲԿ» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2019/3 ծածկագրով գնանշման հարցմանը:

Գնահատող հանձնաժողովի 22.03.2019 թվականի որոշմամբ 3,35,44,50 չափաբաժիններով Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղը զբաղեցնող մասնակից (հաստատվում է կից ներկայացվող գնահատող հանձնաժողովի որոշման պատճենով):

29.03.2019 թվականին պատվիրատուն gnumner.am կայքում հրապարակել է պայմանագիր կնքելու մասին հայտարարություն, որտեղ առկա են գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված 3,35,44,50 չափաբաժինները:

08.04.2019 թվականին պատվիրատուն ուղարկել է պայմանագրի նախագիծը, որից բացակայում են 3-րդ և 35-րդ չափաբաժինները (հաստատվում է կից ներկայացվող պայմանագրի նախագծով)

Ընկերությունը 08.04.2019 թվականին գրություն է ուղարկել պատվիրատուին (կցվում է)՝ խնդրելով պարզաբանել, թե ինչ հիմքերով են 3-րդ և 35-րդ չափաբաժինները հանվել պայմանագրից:

ՄՈՒՏՔ N Ս-16/03-19
«11» 04 2019թ.

Shiraki str. 1/68 Yerevan 0043 Armenia
Շիրակի 1/68 ՀՀ, 0043, Երևան
ул. Шираки 1/68 РА, 0043, Ереван
Tel. Հեռ. Тел. +374 60 700500
e-mail: alfapharm@alfapharm.am

Պատվիրատուն 09.04.2019 թվականին էլեկտրոնային հասցեի միջոցով պատասխանել է, որ այդ չափաբաժինները չեն համապատասխանել տեխնիկական բնութագրի պահանջներին:

Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի՝ 22.03.2019 թվականի որոշումից հետո գնահատող հանձնաժողովը որևէ այլ որոշում, այդ թվում՝ 3-րդ և 35-րդ չափաբաժիններով այլ անձի ընտրված մասնակից ճանաչելու մասին, չի ընդունել. Ընկերությունից որևէ փաստաթուղթ կամ այլ նյութեր չի պահանջել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 46-րդ և 50-րդ հոդվածներով՝

խնդրում ենք

պարտավորեցնել թիվ ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2019/3 ծածկագրով գնանշման հարցման պատվիրատուին փոփոխություններ կատարել «Ալֆա-Ֆարմ իմպորտ» ՓԲԸ-ի հետ կնքվող պայմանագրի 1-ին հավելվածում՝ դրանում նախատեսելով նաև 3-րդ և 35-րդ չափաբաժինները:

Կից ներկայացվում են՝

1) թիվ ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 2019/3 ծածկագրով գնանշման հարցման փաթեթը,

2) պատվիրատուին ուղղված գրությունը և դրա վերաբերյալ պատվիրատուի պատասխանը,

3) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:

10.04.2019թ.

Հարգանքով՝ Սամվել Շիլաջյան

Shiraki str. 1/68
Yerevan 0043 Armenia
Շիրակի 1/68
ՀՀ, 0043, Երևան
ул. Шираки 1/68
РА, 0043, Ереван
Tel. Հեռ. Тел. +374 60 700500
e-mail: alfapharm@alfapharm.am